

Արդ, այս այրը որուն մէջ աղբիւր մը կը հոսի, ըստ Burchardի, երեք նետընկէց հեռու է Նահապետներուն շիրիմներէն դէպ ի արեւմուտք, ինչ որ մեզ բոլորովին կը տանի դէպ ի Այն Ճէտիտ որ կը համապատասխանէ այս նկարագրութեան և կը գտնուի էլ Արպաինի բարձրութեան արևելեան զառիվայրին վրայ: Հաւանաբար այս ծառին մօտ կը կարգային սաղմոս և աղօթք, ինչպէս գրուած են Ռահուսացի Պոնիփակիոսի (1555) գիրքին մէջ (Deperenni Cultu, էջ 207): Ժէ. դարուն երեք հրեշտակներու այցելութեան յիշատակը փոխադրուած է էլ-Արպաինի գագաթը: 1614ին Pietro della Valle հոն «կը տեսնէ խիստ հին բեկկնի ծառ մը որ միւսնոյն արմատին վրայ ունէր երեք ոստեր»: Այս վերջին մասնայատկութիւնը որ սակայն ուրիշ ծառերու նկատմամբ ալ ընդհանուր է, ուխտաւորները խնամքով կը նշանակէին Ս. Երրորդութեան խորհրդանշանին պատճառովը: Վերև յիշուած հովմէացի ուխտաւորը էլ-Արպաինի մզկիթը «ուր՝ ոմանք կ'ըսեն թէ կը տեսնուի Յեսսէի գերեզմանը» Կոստանդիանոսի կողմէն շինուած բեկկնիին եկեղեցին կը համարի:

Ուխտաւորական այս տեղեկութիւնները կը հաստատեն այն խօսքը թէ երբ ծանօթ պատմական կազմին կամ բեկկնիին կ'անհետանայ՝ ժողովրդական ոգին ոչնչացած չուզեր տեսնել յիշատակը ծառին: Ահա այդ պատճառով է որ Մամբրէի կաղնիին յիշատակը տեղափոխուած է այլ և այլ տեղեր՝ նոյն շրջանակին

---

Աղամայ ի կենսագործ ի դրախիս խաբմամբ պատրաստ փայտին ծառոյն գիտութեան, օձաջամբ պատրաստ փայտին հաւակեալ ի պտղոյն եւ եղև վայրբնակիլ մայրաբաղան Երուսաղէմ: